Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի ռուսաց լեզու, ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա , հայոց լեզու և գրականություն , տեխնոլոգիա, երգ, կերպարվեստ, աշխարհագրություն և մաթեմատիկա առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է /Ձև 1/:

2.Փաստաթուղթ / դիպլոմ /՝ ,, Հանրակրթության մասին ,, ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճենը:
4.Ինքնակենսագրություն / Ձև 4 / :
5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները / դրանցառկայությանդեպքում /:
6.Մեկ լուսանկար 3 X 4 չափի:
7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև 2024թ. հունվարի 13-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10-00-ից մինչև 16-00-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. հունվարի 16ին՝ ժամը 13:00-ին, Սյունիքի մարզի Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոցում**: **Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Տաթև, 1-ին փողոց, շենք 10:** Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-51-53-37 կամ / 0284 / 97-4-71 հեռախոսահամարներով: